Հաստատում եմ՝

Տնօրեն Կ.Սմբատյան
Փոխտնօրեն Հ.Գրիգորյան

# Սարդարապատի միջնակարգ դպրոցի

# ուսուցչի օգնականի

# աշխատանքային պլան

# 2023 - 24 ուստարի

Ուսուցչի օգնական՝ Մեժլումյան Ս.

Сканировано с CamScanner

| № | Աշխատանքի բովանդակությունը | Գործողություն | Կատարման ժամկետ |
|---|---|---|---|
| 1. | Ծանոթանալ կցված դասարաններում օգնության կարիք ունեցող երեխաների հետ | Ծանոթանալ գնահատման փաստաթղթերին, անցկացնել զրույցներ ծնողների, ուսուցիչների, երեխաների հետ | Սեպտեմբեր հոկտեմբեր |
| 2. | Բացահայտել օգնության կարիք ունեցող սովորողների ուժեղ կողմերը | Ուժեղ կողմերի բացահայտման նպատակով կատարել տարբեր աշխատանքներ (խմբային և անհատական), հոգեբանական խաղեր, թեստեր, դիտարկումներ, զրույցներ | Սեպտեմբեր-դեկտեմբեր |
| 3. | Բացահայտել սովորողների նախասիրությունները, հետաքրքրությունները | Անցկացնել զրույցներ տարբեր թեմաներով, դիտարկել տարբեր իրավիճակներում | Սեպտեմբեր-դեկտեմբեր |
| 4. | Մասնակցել կցված դասարանների ծանր, միջին և թեթև կարիք ունեցող սովորողների անհատական ուսումնական պլանների կազմման գործընթացին: | Բազմամասնագիտական խմբի հետ միասին մասնակցել անհատական ուսումնական պլանների կազմման գործընթացին: | Սեպտեմբեր-դեկտեմբեր |
| 5. | Մշակել և իրականացնել համատեղ դասավանդման մոդելներ առարկայական ուսուցիչների հետ | Պարբերաբար անցկացնել քննարկումներ ուսուցիչների հետ, կատարել աշխատանքի բաժանում, պլանավորել և իրականացնել համատեղ առարկայական դասեր | Ուստարվա ընթացքում |
| 6. | Հաշվի առնելով սեզոնային փոփոխությունները՝ խորհուրդ սովորողներին զգոնության ու վարակիչ հիվանդություններից հնարավորինս պաշտպանվելու նկատմամբ ուշադրություն | Պարբերաբար անցկացնել զրույցներ սովորողների և նրանց ծնողների հետ առողջ ապրելակերպի, կոփումների, հիգիենայի կանոնները պահպանելու, վիտամինների, պատվաստումների, սոցիալական հեռավորության պահպանման և այլ հարցերի մասին | Սեպտեմբեր հոկտեմբեր |

Сканировано с CamScanner

| | | | |
|---|---|---|---|
| 7. | Կատարել ընտանիքում, հասարակության մեջ շփման, հաղորդակցման կանոնների ուսուցում՝ բարև Ձեզ, ցտեսություն, շնորհակալություն): | Շարունակաբար, հետևողականորեն, նպատակաուղղված, բառ անհրաժեշտության արտահայտությունների օգտագործում: | Ուստարվա ընթացքում |
| 8. | Զրուցել անձնական հիգիենայի և օրվա ռեժիմի մասին: | Նկարների, պաստառների, թեստերի, մուլտերի, զրույցների միջոցով կատարել այդ աշխատանքները: | Ուստարվա ընթացքում |
| 9. | Կատարել երեխաների վարքային դրսևորումների ուսումնասիրություն: | Ուսումնասիրել երեխաների հույզերի արտահայտումը խաղային իրավիճակներում (ուրախություն, տխրություն, զարմանք, զայրույթ): | Ուստարվա ընթացքում |
| 10. | Կրթության առանձնահա-տուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին ընդգրկել տարբեր միջոցառումներում: | Օժանդակել տարբեր բնույթի միջոցառումներին, կազմակերպչական աշխատանքներին: | Ուստարվա ընթացքում |
| 11. | Խմբային ձևաչափով կազմակերպել տարբեր թեմաներով պարապմունքներ: | Սոցիալ-կենցաղային հմտությունների ձևավորման և զարգացման նպատակով անցկացնել պարապմունքներ խմբային ձևաչափով: | Ուստարվա ընթացքում |
| 12. | Թեմատիկ պաստառների պատրաստում: | Բազմամասնագիտական խմբի աջակցությամբ պատրաստել պաստառներ: | Ուստարվա ընթացքում |
| 13. | Ընդհանրապես ժամանակի և հատկապես տարվա եղանակների հարցում երեխաների կողմնորոշում: | Ձևավորել ժամանակի զգացողության հմտություններ նկարների, պաստառների, զրույցների, ապլիկացիաների պատրաստման միջոցով: | Ուստարվա ընթացքում |
| 14. | Բնապահպանական դաստիարակության իրականացում: | Դիտումներ՝ ծառերի ծաղկում, ամպրոպ, երկինք, անձրև, պայ-ծառ արև, ամպեր, ձյուն և այլն: Անցկացնել զրույցներ բույսերի օգտակարության, խնամքի մասին: | Ուստարվա ընթացքում |

Сканировано с CamScanner

| | | | |
|---|---|---|---|
| 15. | Բարու և չարի մասին հասկացությունների քննարկում և ձևավորում: | Հեքիաթների ընթերցում, բարու և չարի դերի, նշանակության գիտակցման ձևավորում: Կազմակերպել մուլտֆիլմերի և ֆիլմերի դիտում և քննարկում: | Ուստարվա ընթացքում |
| 16. | Օժանդակություն բաց դասերի կազմակերպմանը: | Օժանդակել բաց դասի կազմակերպչական աշխատանքներին,օգնել սովորողներին ինքնադրսևորվելու բաց դասերին: | Ուստարվա ընթացքում |
| 17. | Կիսամյակի ընթացքում կատարած աշխատանքնե-րի վերլուծություն և գնահատում: | Վերլուծել կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքը և կատարել արդյունավետության գնահատում: Համեմատականներ անցկացնել կիսամյակի սկզբի և ավարտի սովորողի առաջադիմության դինամիկայի միջև: | Դեկտեմբեր, մայիս |
| 18. | Տարվա ընթացքում կատարած աշխատանքնե-րի վերլուծություն և գնահատում: | Վերլուծել տարվա ընթացքում կատարված աշխատանքը և կատարել արդյունավետության գնահատում: Վերլուծել նաև բացթողումներն ու թերի կողմերը: | Մայիս |
| 19. | Աջակցել ուսուցիչներին հանրակրթական, պետական չափորոշչով և առարկայական չափորոշչով ու ծրագրով սահմանված գիտելիքների, կարողությունների և հմտությունների առնվազն պարտադիր նվազագույն պահանջների յուրացման գործընթացում՝ կիրառելով դասավանդման արդյունավետ մեթոդներ ու տեխնոլոգիաներ | Կատարել մշտադիտարկումներ, խորհրդակցել ուսուցիչների հետ ուսումնական ոլորտում դժվարություններ ունեցող աշակերտների բացահայտման հարցում: Իրականացնել նրանց հետ անհատական աշխատանք: | Տարվա ընթացքում |

Сканировано с CamScanner

| | | | |
|---|---|---|---|
| 20. | Համագործակցել սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ սովորողի կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում: | Համագործակցել ծնողների, դասղեկի, բազմամասնագիտական աջակցող թիմի հետ սովորողի դաստիարակության խնդիրների վերհանման և շտկման նպատակով: | Տարվա ընթացքում |
| 21. | Աջակցել ուսուցիչներին ԱՈՒՊ-ի իրականացման գործընթացում | Համագործակցել ՏՄԱԿ-ի, աջակցող թիմի, դասավանդող ուսուցիչների հետ: | Տարվա ընթացքում |
| 22. | Դիտարկել, բացահայտել, հետազոտել երեխաների ուսումնառության գործընթացում արձանագրված, ուսումնական նյութի յուրացմանը խոչընդոտող բովանդակային և հոգեբանամանկավարժական խնդիրները: | Համագործակցել դասավանդող ուսուցիչների հետ: | Տարվա ընթացքում |
| 23. | 2023-24 ուստարվա տարեվերջյան հաշվետվության կազմում: | Տարվա ընթացքում կատարած աշխատանքների և ձեռքբերումների մասին համառոտ տեղեկատվություն: | Հունիս |

Сканировано с CamScanner